տուրական զարգացումը: Միս կողմից յղացաւ և իրականացրեց բազմաթիւ քաղաքական ակտեր, որոնց նպատակն էր յաջողացնել հայկական հարցի լուծումը:

Ի՞նչ էր հայկական հարցի էութիւնը վերջին շրջանում: Ո՛չ միայն Դաշնակցութեան, այլ և գրեթէ ամբողջ հայ մտաւորականութեան համար հայկական հարցի լուծումը ազգային ինքնավարութիւնից դէնը չէր գնում: Հայ ժողովուրդը իր ազգային զարգացումն ու կուլտուրական-տնտեսական բարգաւաճումը համարում էր կատարելապէս ապահովուած Ռուսաստանի և Տաճկաստանի պետականութեան սահմաններում ինքնավարութիւն պահանջելով: Դաշնակցութիւնը փափագում էր տեսնել Ռուսահայաստանը իբրև ֆէդէրատիւ մաս ազատ Ռուսաստանի, իսկ Տաճկահայաստանը՝ նոյնպիսի կապերով կապուած Օսմանեան պետութեան հետ: Բացարձակապէս անհիմն էր և անիրական ռուս և տաճիկ ազգայնականների մեղադրանքը, հայերի հասցէին, թէ, իբր, սրանք ձգտում են անջատման:

Այս քաղաքական դաւանանքով էլ հայ ժողովուրդը մտաւ համաշխարհային պատերազմի մէջ՝ անցնելով դաշնակից պետութիւնների կողմը: Կամաւորական շարժումը խանդավառ արտայայտութիւնն էր այդ մասնակցութեան: Եւ մենք չենք կարող մոռանալ այս հանդիսաւոր ժամին հիասթափութիւնը, որ վիճակուեց հայ ժողովրդին դաշնակից պետութիւնների կողմից: Հակառակ հայ ժողովրդի տուած անհաշիւ զոհերի դաշնակիցների դատի օգտին, հակառակ եւրոպական դէմոկրատիայի և առաջաւոր գործիչների վճռական կամքի, հակառակ հրապարակով տուած խոստումների՝ մեծ պետութիւններից ոմանք իրենց մէջ գաղտնի դաշինք կնքեցին, որով Հայաստանը բաժանւում էր երկու մասի, մէկը տրւում էր ցարական Ռուսաստանին, միւսը՝ Ֆրանսային: Եւ միայն ռուսական մեծ յեղափոխութիւնը խորտակեց այս բռնաւորական ծրագիրը, նիւթագործեց հայ յեղափոխական ժողովրդի դատը և հետզհետէ հասունացրեց Հայաստանի երկու հատուածների անկախութեան և միութեան գաղափարը: Մի գաղափար, որ միս ու արիւն ստացաւ միայն վերջին երկու տարիների ընթացքին, յեղափոխութեան շնչի ազդեցութեան տակ, հայ աշխատաւորութեան հերոսական ճիգերի հետևանքով: Անցեալ տարւայ մայիս 28-ի ակտը պաշտօնական հռչակումն էր այդ գաղափարի, և Փարիզի Դեսպատոյն Խորհրդի ներկայ ակտը նիւթագործումն ու վաւերացումն է հայ ժողովրդի կամքի արտայայտութեան: Հայաստանի հանրապետութեան իրական ճանաչումը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ձևական հաստատումը միայն այն գաղափարի, որ արդէն արմատացած է բովանդակ հայ ժողովրդի գիտակցութեան մէջ և, իբրև այդպիսին, միանգամայն ողջունելի է: Նա դեռ պակումը չէ մեր գործի, բայց առաջին պաշտօնական քայլն է, որին անհրաժեշտօրէն պէտք է յաջորդէ մեր ամբողջական դատի նիւթագործման ակտը:

Մեր ազատագրական պայքարի և Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութեան կենտրոնական առարկան եղել է տաճկահայոց դատը. ամբողջ սերունդներ դաստիարակուել ու կազմակերպուել են այդ դատի վրա: Մեր ճիգերի մեծագոյն բաժինը յատկացուած է եղել տաճկահայկական հարցին, և բնական է միանգամայն, որ ամենքս սպասում էինք առաջ տաճկահայկական խնդրի լուծումին և ապա Ռուսահայաստանի անկախութեան ճանաչման: Սակայն, դէպքերի ընթացքը այլ հետևանքներ տուեց. բոլշևիկեան Հեղեղի առաջ պատուար քաշելու մտահոգութեամբ Եւրոպան Տաճկաստանը թողած՝ ձեռք առաւ ռուսական խնդիրը և մի շարք ուրիշ ազգութիւնների հարցի հետ վճռեց նաև Ռուսահայաստանի ճակատագիրը: Սրանից բնաւ չի հետևում այն, որ տաճկահայկական խնդիրը անուշադրութեան է մատնուել, և անտեղի